


ՉԱՐՄԻՆԵՆ

Posted on August 25, 2021 by Keghart



Category: [Opinions](#)



Յակոբ Միքայելյան, «Ազգ», 19 Օգոստոս 2021

Չարմինե Գալայճեան-Պողոսեանը ճանչցած եմ Հալեպի ՀԲԸՄ-ի Լ.Ն.-Գ.Կ. վարժարանէն, երբ ան ինձմէ դասարան մը ցած էր:

Այդ օրերէն արդէն կը փայլէր իր հայերէնի հանդէպ ունեցած սիրով ու դպրոցական գեղեցիկ շարադրութիւններով: Անկախ որեւէ յստակ պատճառէ, պատահած են աշակերտներ, որոնց մէջ հայերէնի սերը իւրայատուկ փթթում մը ունեցած է այդ պատանեկան տարիքին, ուր՝ ոչ ժառանգականութիւնը դեր խաղացած է, ոչ ալ որեւէ երեւելի պատճառ: Հայերէն լեզուի ու գրականութեան դասապահերուն դասաւանդին կողմէ նետուած սերմերը յանկարծ գտած են գիրենք գրկաբաց ընդունող հողը, ուր ծլած են ու ծաղկած եւ դպրոցէն ետք ալ, անբաժան մնալով անկէ, շարունակած են ջրել ու ինսամել այդ բոյսը, մինչեւ որ փարթամօրէն աճած է ան ու պտղաբերած եւ այդ պտուղներն ալ լիաբուն բաշխուած թերթերու ու գիրքերու մէջ:

Այսպէս եղած է հայերէն լեզուին ուղեկցումը Չարմինէի կեանքի տարիներուն, իր հետ ճամբորդելով Ազգէն Հալեպ, ապա Միացեալ Նահանգներ: Արդէն վերջերս Երեւանի մէջ լոյս տեսած իր առաջնեկ գիրքին ալ խորագիրը այդպէս է՝ «Ազգէն՝ Ամերիկա» :

Չարմինէն երկար տարիներ, զանազան վայրերու, զանազան դպրոցներու մէջ եղած է հայերէնաւանդ ուսուցչուհի: Նիւ Եորք-Նիւ Ճըրզի ԹՄՄ-ի վարչութեան անդամ է, իսկ կողակիցը՝ Միսաք Պողոսեանը Հալեպի «Ադամեան» թատերախումբի դերասաններէն եղած է, իմ բեմընկերս, որ ցարդ կը շարունակէ իր մասնակցութիւնը բերել Նիւ Եորքի ԹՄՄ-ի թատերախումբի ելոյթներուն: Գրականութեան եւ բեմարուեստի երկու երկրպագուներ կը շարունակեն իրենց շնորհքները ի սպաս դնել հայապահպանման կարեւոր գործին:



Չարմինէն երկար տարիներ եղած է նաեւ տնօրէնուհին Նիւ Եորքի Սրբոց Նահատակաց ամենօրեայ վարժարանին (ՄՆԱՎ): Վարժարան մը, որուն մասին Չարմինէն դիմատետրի էջերուն այնքան գրած ու նկարներ գետտեղած է, որքան նոյնը ըրած է իր

հարազատ մտք՝ հանգ. Տիրամայր Չապլին ու երջանկայիշատակ քահանայ եղբոր:
Ուրեմն կրնաք պատկերացնել, թե ինչ տեղ ունեցած է հայ վարժարանը իր սրտին ու
մտքին մեջ:

Ազեզը, Հալեպէն հազիւ 40 քմ հեռաւորութեան վրայ գտնուող գիւղաքաղաք մը, եղած է
Թուրքիոյ սահմանակից: Արդարեւ, սահմանէն երեւցող Քիլիսը, որ իրենց պապենական
ծննդավայրը կը նկատուի, հայաթափ ըլլալով Յեղասպանութեան օրերուն, անոր
բնակիչները ապաստան գտած են Ազեզի մէջ, ուր հայ նոր գաղութ մը արմատացած է,
ունենալով համայնքի մը գոյատեւումը ապահովող երեք ազդակներն ալ՝ եկեղեցի,
դպրոց, ակումբ:

Գիրքին պարունակութիւնը իր յօդուածներն են, մենագրութիւնները,
գրախօսականները, խոհագրութիւններն ու հայ մամուլին ուղարկած
թղթակցութիւնները:

Թղթակցութիւններ՝ որոնք մեկական գրական գործերու վերածուած են իր փայլուն
հայերէնին շնորհիւ, իրավիճակները տեսնելու, խորհրդածելու եւ թուղթին յանձնելու իր
իւրայատուկ կարողութեամբ:

Իր ապրած միջավայրի ակնառու գրողներու, գիտնականներու, թատրոնի մարդոց, կամ
այլ՝ գործարար ասպարեզներու մէջ փայլած մարդոց, ապա՝ հայրենիք այցելութեան
ընթացքին հանդիպած, կամ Նիւ Եորք այցելած հայրենի անձնաւորութիւններու մասին
անպայման էջեր յատկացուցած է ու հայ թերթերու ուղարկած:

Չարմինէին աչքէն չէ վրիպած որեւէ կարեւոր երեւոյթ, իրադարձութիւն, որուն մասին
գրելը պարտականութիւն սեպած է ու գրած այնքան գեղեցիկ ոճով ու կենդանի
նկարագրութեամբ, որ ընթերցողը մասնակից կը դարձնէ երեւոյթին:

Չարմինէն արժանացած է ամերիկեան եւ հայկական շարք մը մրցանակներու եւ
գնահատագրերու, իսկ 2014-ին՝ Ամենայն Հայոց Գարեգին Բ. Կաթողիկոսի Ս. Սահակ-Ս.
Մեսրոպ շքանշանին եւ սրբագիր կոնդակին:

440 Էջանի գիրքը հրատարակուած է Հայաստանի Մանկավարժական համալսարանի
Սփիւռք Գիտաուսումնական կեդրոնին կողմէ, խմբագրութեամբ Քնարիկ
Աբրահամեանի: Գիրքին կողքը կը գարդարէ Արամ Հայկազի մէկ գեղանկարը, որ
հեղինակը նուէր ստացած է մեծ գրողէն:

Սրտագին շնորհաւորութիւններ, նոր երկերու ակնկալիքով:

There are no comments yet.